## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-706-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 3-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ապակիները (308.16 քառ. մետր՝ 5,399 կգ ընդհանուր քաշով, 9,552.96 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա, օգոստոսի 28-ի N Մ-911-Ա, հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1299-Ա և 2016 թվականի մարտի 18-ի N Մ-211-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 707 -Ա**

**քաղ. Երևան**

**«ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19739-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/23026-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 05514397) իրականացվող՝ 304,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամառային ճամբարի պարենային մատակարարում» ծրագիրը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մայիսի 30-ի N Մ- 444-Ա որոշման շրջանակներում մանկական ճամբարի կարիքների համար ձեռք բերել պարենամթերք:

2. Սահմանել, որ «Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բրոկկոլի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02632412) 2016 թվականի հուլիսի 26-ին կնքված՝ N ՕC/16/04/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բրնձի, ոսպի և հնդկաձավարի ձեռքբերում՝ 304,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 708 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19144-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 02/14/9490-16, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 01/14.1/9531-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 25-ի N 06/3-8/22228-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 22,615,750 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աշոտ և Դայանա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00103845) 2016 թվականի հունիսի 22-ին կնքված N Ա-Ճ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արգելափակոցների տեղադրում՝ 22,615,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«19» հուլիսի 2016թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կահավորում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կահավորել Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող կառուցվող ռազմավարական նշանակության ավտոճապարհի 15.250մ. երկարությամբ համապատասխան արգելափակոցներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 22.615.750,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունիսի 22-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ հունիսի 22-ից մինչեւ 2016թ.դեկտեմբերի 31-ը տեղադրել 15.250 մ. երկարությամբ արգելափակոցներ Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համապատասխան հատվածներում՝ 22.615.750,00 դրամ արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ԱՇՈՏ ԵՎ ԴԱՅԱՆԱ» ՍՊԸ-ի կողմից 15.250մ. երկարությամբ արգելափակոցների տեղադրում՝ 22.615.750,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ տարեկան հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 709 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19167-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 02/14/9423-16, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 01/14.1/9530-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 25-ի N 06/3-8/22225-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 9,987,390 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01506808) 2016 թվականի հուլիսի 4-ին կնքված N Փ-Ա-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր փորձարկումների իրականացում՝ 9,987,390 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«20» հուլիսի 2016թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումներ»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Օժանդակել Վարդենիսից Մարտակերտ տանող 104 կմ երկարությամբ ավտոճանապարհի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարերարը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Սյունիքի մարզ, ԼՂՀ, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 9.987.390,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչությունը |

10/2

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ. հուլիսի 04 -ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. հուլիսի 04 -ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 30-ը կառուցվող ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումների իրականացում: Արժեքը՝ 9.987.390,00 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածի անվանումների համաձայն Վարդենիս-Մարտակերտ կառուցվող 104 կմ երկարությամբ ավտոճանապարհի լաբորատոր փորձարկումների իրականացում՝ 9.987.390,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ Կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ներկայացվում են ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

10/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 710 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ԽՈՍՔԻ ԾԱՆՐ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 8 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19131-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 02/14/9425-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի 2016 թվականի հուլիսի 26-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/6690-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 25-ի N 06/3-8/22219-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,690,600 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի «Խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարի արհեստանոցի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2016 թվականի հուլիսի 11-ին կնքված N ՀՀ-Կ-06/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստում և տեղադրում՝ 820,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արտադեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558445) 2016 թվականի հուլիսի 11-ին կնքված N ԱՎ-ԿԱ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կարի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում՝ 1,870,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«19» հուլիսի 2016թ.

**Երեւան քաղաքի «խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարի արհեստանոցի կահավորում»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Երեւանի «խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի սաների ուսման պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /Իրավաբանական և ֆիզիկական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.690.600,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երեւան քաղաքի «խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հուլիսի 11 -ից մինչեւ 2016թ.սեպտեմբերի 11-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. հուլիսի 11 -ից մինչեւ 2016թ. սեպտեմբերի 11-ը կարի արհեստանոցի համար.<br>անհրաժեշտ գույքի /ըստ ներկայացված ցուցակի/ ձեռքբերում՝ 1.870.000,00 դրամ արժողությամբ<br><br>համապատասխան կահույքի պատրաստում և տեղադրում՝ 820.600,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀԱՏԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ցանկի համաձայն կարի արհեստանոցի համար մասնագիտական կահույքի պատրաստում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 820.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Արտադեկ» ՍՊԸ-ից մասնագիտական գույքի գնում և անհատույց հանձնում՝1.870.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 711 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19227-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22830-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վարդան Կիրոյի Կիրոյանցի (անձնագիր՝ N 03 05 546287, տրված՝ 07.09.2004 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական և այլ ապրանքների (21,666 կգ ընդհանուր քաշով, 652,772.50 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 712 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19127-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22838-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ հաշմանդամների համար նախատեսված 2 ավտոմեքենայի ներմուծման ծրագիրը՝

1) 2002 թվականի արտադրության MAZDA TRIBUTE մակնիշի, նույնականացման համարը՝ 4F2YU08162KM52272, 1,850 կգ քաշով, 4,650 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,850 ԱՄՆ-ի դոլար.

2) 2004 թվականի արտադրության KIA SORENTO մակնիշի, նույնականացման համարը՝ KNDJC7333945181666, 1,850 կգ քաշով, 6,000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,850 ԱՄՆ-ի դոլար:

Մաքսային ձևակերպումները կատարվելու են ԱՄ ՄԶՄ մաքսատանը:

Ավտոմեքենաները նախատեսված են անհատույց հանձնվելու Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերաններին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 713 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 28-ի N 07/80-2/19272-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 28-ի N ԱՄ/22.2/8311-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22828-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված երեք խմբաքանակ բեռի ներմուծման ծրագիրը՝

1) վիտամիններ՝ 1 տեղ, 10 lbs քաշով, 74.34 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 45 ԱՄՆ-ի դոլար, նախատեսված է անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին.

2) տեսախցիկ՝ 1 տեղ, 13 lbs քաշով, 150 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 50 ԱՄՆ-ի դոլար, նախատեսված է անհատույց հանձնել Արցախի հանրային հեռուստատեսությանը:

Մաքսային ձևակերպումները կատարվելու են ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատանը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 714 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19208-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 26-ի N 06/3-8/22411-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված մահճակալների, ներքնակների և սայլակների (1 տեղ, 731 կգ քաշով, 3,470 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 200 ԱՄՆ-ի դոլար, «Արարտյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերաններին բաշխելու համար:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 715 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19385-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N ԱՄ/22.2/8406-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22836-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից FUNDS ARMENIEN DE FRANCE մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված ուսուցողական մասնագիտական սարքավորումների և խնամքի ու հիգիենայի պարագաների (237 տեղ, 7,200 կգ քաշով, 6,000 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,500 եվրո, «Արարտյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

- Բեռը նախատեսված է անհատույց հանձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 716 - Ա**

**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19390-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N ԱՄ/22.2/8449-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22840-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված վիտամինների (1 տեղ, 10 lbs քաշով, 76.46 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 45 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 717 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19390-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N ԱՄ/22.2/8449-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22840-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Քվանտա Լազեր» ընկերության միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական լազերային համակարգը (1 տեղ, 116 կգ ընդհանուր քաշով, 15,865 եվրո արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 718 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19224-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/6875-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 2-ի N 06/3-8/22829-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում շահառուների ցանկին ավելացնել հետևյալ ստացողներին՝

1) ՀՀ Արմավիրի մարզի Դաշտի գյուղապետարան.

2) ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկի գյուղապետարան.

3) ՀՀ Արագածոտնի մարզի Կաքավաձորի գյուղապետարան:

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (8,713.8 կգ ընդհանուր քաշով, 222,701.12 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 3,800 ֆունտ ստերլինգ, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Տավուշի մարզպետներին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## Բաշխման ցանկ

| | օգտ. հագուստ (արկղ) | | կոշիկ (զույգ) | | օգտ.անկողնային պարագա (գործած ծածկոց, վերմակ) (արկղ) | | հիգենիկ պարագա (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ Երասխի Գյուղապետարան (85) ընտ. | 40 | $9,934.00 | 15 | $342.15 | 15 | $1,971.60 | 1 | $69.92 |
| Արմավիրի մարզ Դաշտի Գյուղապետարան (30) ընտ. | 35 | $8,692.25 | 15 | $342.15 | 10 | $1,314.40 | | |
| ՀՀ Արագածոտնի Մարզպետարանի Սոցիալական Բաժին | 40 | $9,934.00 | 15 | $342.15 | 15 | $1,971.60 | | |
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | 45 | $11,175.75 | 20 | $456.20 | 15 | $1,971.60 | 1 | $69.92 |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | 30 | $7,450.50 | 15 | $342.15 | 10 | $1,314.40 | | |
| Արագածոտնի մարզ Կաքավաձորի Գյուղապետարան(40) ընտ. | 30 | $7,450.50 | 15 | $342.15 | 10 | $1,314.40 | | |
| Արմավիրի մարզ Տարոնիկի Գյուղապետարան (50) ընտ. | 30 | $7,450.50 | 15 | $342.15 | 10 | $1,314.40 | | |
| Տավուշի մարզ Կոթիի Գյուղապետարան (45) ընտ. | 45 | $11,175.75 | 15 | $342.15 | 15 | $1,971.60 | 1 | $69.92 |
| Տավուշի մարզ Ոսկեվանի Գյուղապետարան (30) ընտ. | 45 | $11,175.75 | 15 | $342.15 | 15 | $1,971.60 | 1 | $69.92 |
| Արագածոտնի մարզ Աշնակի Գյուղապետարան (30) ընտ. | 30 | $7,450.50 | 15 | $342.15 | 10 | $1,314.40 | 1 | $69.92 |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 80 | $19,868.00 | 45 | $1,027.68 | 30 | $3,944.22 | | |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 192 | $47,685.55 | 214 | $4,882.57 | 91 | $11,962.06 | 14 | $978.96 |
| | 642 | $159,443.05 | 414 | $9,445.80 | 246 | $32,336.28 | 19 | $1,328.56 |

| | գրենական պիտույք (հատ) | | դպրոցական պիտույք (հատ) | | խաղալիք (արկղ) | | հեծանիվ, (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արարատի մարզ Երասխի Գյուղապետարան (85) ընտ. | 150 | $291.00 | 25 | $272.92 | 5 | $549.50 | | |
| Արմավիրի մարզ Դաշտի Գյուղապետարան (30) ընտ. | | | | $0.00 | 3 | $329.70 | | |
| Արագածոտնի մարզ Արտենիի Գյուղապետարան (120) ընտ. | 250 | $485.00 | 45 | $488.70 | 5 | $549.50 | | |
| Արագածոտնի մարզ Կարբիի Գյուղապետարան (60) ընտ. | 100 | $194.00 | 40 | $434.40 | 3 | $329.70 | | |
| Տավուշի մարզ Կոթիի Գյուղապետարան (45) ընտ. | 100 | $194.00 | 30 | $325.80 | 3 | $329.70 | | |
| Տավուշի մարզ Ոսկեվանի Գյուղապետարան (30) ընտ. | 100 | $194.00 | 30 | $325.80 | 3 | $329.70 | | |
| Արագածոտնի մարզ Աշնակի Գյուղապետարան (30) ընտ. | | | 25 | $272.92 | | | | |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 300 | $582.00 | 80 | $868.80 | | | | |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 605 | $1,167.48 | 167 | $1,813.62 | 19 | $2,088.20 | 6 | $960.00 |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ի ճամբարի ծրագրի համար | | | | | | | 3 | $480.00 |
| | 1605 | $3,107.48 | 442 | $4,802.95 | 41 | $4,506.00 | 9 | $1,440.00 |

| | սայլակ (հատ) | | հենակ (հատ) | | սկուտեր (հատ) | | համակարգիչ մոնիտոր (արկղ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 10 | $1,400.00 | 11 | $88.00 | 3 | $75.00 | 15 | $3,305.00 |

| | բենզինով սղոց (հատ) | | կացին (հատ) | | բենզինով գեներատոր (հատ) | | տարզանկա (2 մասով) (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | | | 1 | | | | | |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ի ճամբարի ծրագրի համար | 1 | $180.00 | | $15.00 | 1 | $350.00 | 2 | $110.00 |

| | պահարան (հատ) | | ծալվող մահճակալ (հատ) | | սեղան (հատ) | | մանկական ներքնակ (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 3 | $115.00 | 1 | $20.00 | 2 | $95.00 | 2 | $27.00 |

| | երեխայի հեծանիվ (հատ) | | քայլելու համար պարագա անիվներով (հատ) | |
|---|---|---|---|---|
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով (450) ընտ. | 5 | $475.00 | 3 | $36.00 |

«Շողիկ» ՀԲՀԿ-ի
տնօրեն՝ Գ. Մինասյան

25.07.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 719 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19135-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 26-ի N 06/3-8/22358-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՋԱՏՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02631186) 2016 թվականի հունիսի 15-ին կնքված N 007 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իրականացվող ծրագրերի շրջանակներում ճարտարապետական և դիզայներական մասնագիտական բանավոր ու սխեմատիկ գծագրերի տեսքով խորհրդատվություն՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 720 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19065-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 26-ի N 06/3-8/22357-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մազնոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05501766) 2016 թվականի հուլիսի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղահրապարակների սարքավորումների պատրաստումն՝ 4,517,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 721 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19136-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 26-ի N 06/3-8/22355-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529689) 2016 թվականի հունիսի 28-ին կնքված պայմանագրում N A/019/2016 նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 11,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 722 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 3

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 28-ի N 07/80-2/19305-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 27-ի N 06/3-8/22449-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյ-Փի-Էմ-Ջի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529689) 2016 թվականի հուլիսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 723 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-075-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (SOAR) - ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 28-ի N 07/80-2/19271-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 26-ի N 06/3-8/22373-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (SOAR)-Հայաստան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն մանկական հաստատություններում և ցերեկային կենտրոններում գտնվող ծնողազուրկ ու ֆիզիկական, մտավոր արատներ ունեցող երեխաներին» ծրագրի մասին» N Մ-075-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արթ Բիլդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00850584) 2016 թվականի հուլիսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 416,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 724 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-989-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19138-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 25-ի N 06/3-8/22222-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-989-Ա (2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1346-Ա որոշման խմբագրությամբ) որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «175,449,129 դրամ» բառերը փոխարինել «188,518,329 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում ու որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «173,249,129 դրամ » բառերը փոխարինել «186,318,329 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 725 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-1453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19134-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22226-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1453-Ա որոշման 1-ին կետի 2-րդ պարբերությունում «312,000 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերը փոխարինել «600,000 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 726 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ**
**ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19391-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22839-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (820 տեղ, 20,250 կգ ընդհանուր քաշով, 30,950.4 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 727 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19392-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի օգոստոսի 1-ի N ԱՄ/22.2/8483-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22841-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վերադարձ Հայաստան» հիմնադրամի կողմից Հայաստանի Հանարպետության պաշտպանության նախարարության համար ձեռք բերված բժշկական սարքավորումների (3 հատ, 30 կգ ընդհանուր քաշով, 555,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծման և անհատույց հանձնման ծրագիրը:

2. «Վերադարձ Հայաստան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 728 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՑԱԽԻ ՄԻԱՎՈՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 1-ի N 07/80-2/19506-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22833-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրանի Հայոց Թեմի Թեմական խորհրդի կողմից «Հայ օգնության միության Արցախի միավոր» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (807 կգ ընդհանուր քաշով, 300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը. բեռի ցանկը կցվում է, «Սյունիքի» ՏՄ) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է Արցախի սոցիալապես անապահով ընտանիքների համար:

2. «Հայ օգնության միության Արցախի միավոր» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

10/5.13

| Կապոցի նo. | Կապոցի պարունակություն | կշիռ |
|---|---|---|
| 18 | Մեծի հագուստ | 12 |
| 19 | Մեծի հագուստ | 12 |
| 31 | Մեծի հագուստ | 12 |
| 32 | Մեծի հագուստ | 15 |
| 33 | Մեծի հագուստ | 12 |
| 45 | Մեծի հագուստ | 13 |
| 47 | Մանկական հագուստ | 12 |
| 48 | Մեծի հագուստ | 12 |
| 49 | Մեծի հագուստ | 12 |
| 50 | Մեծի հագուստ | 12 |
| 51 | Մեծի հագուստ | 12 |
| 52 | Մեծի հագուստ | 12 |
| 53 | Մեծի հագուստ | 12 |
| 54 | Մեծի հագուստ | 12 |
| 55 | Մեծի հագուստ | 12 |
| 56 | Մեծի հագուստ | 12 |
| 57 | Աղիալ | 12 |
| 58 | Մեծի հագուստ | 12 |
| 59 | Մեծի հագուստ | 12 |
| 60 | Մեծի հագուստ | 11 |
| 61 | Մեծի հագուստ | 11 |
| 63 | Մեծի հագուստ | 12 |
| 64 | Մեծի հագուստ | 12 |
| 67 | Մեծի հագուստ | 12 |
| 68 | Մեծի հագուստ | 12 |
| 70 | Մեծի հագուստ | 12 |
| 71 | Մեծի հագուստ | 13 |
| 72 | Մեծի հագուստ | 13 |
| 75 | Մանկական հագուստ | 11 |
| 76 | Մանկական հագուստ | 13 |
| 77 | Մեծի հագուստ | 11 |
| 78 | Մեծի հագուստ | 12 |
| 79 | Մանկական հագուստ | 12 |
| 80 | Մեծի հագուստ | 12 |
| 81 | Մանկական հագուստ | 10 |
| 82 | Մեծի հագուստ | 12 |
| 83 | Մեծի հագուստ | 12 |
| 84 | Հագուստ Ճամբրուկ | 22 |
| 85 | Մեծի հագուստ | 10 |
| 86 | Մեծի հագուստ | 13 |
| 87 | Մեծի հագուստ | 11 |
| 89 | ՀագուստՄաք | 15 |
| 91 | Մանկական հագուստ | 13 |
| 92 | Մեծի հագուստ | 16 |
| 94 | Մեծի հագուստ | 14 |
| 95 | Մանկական հագուստ | 12 |
| 96 | Մեծի հագուստ | 10 |
| 97 | Մեծի հագուստ | 12 |

10/5.12

| | | |
|---|---|---|
| 98 | Մանկական հագուստ | 11 |
| 99 | Մեծի հագուստ | 14 |
| 100 | Մեծի հագուստ | 16 |
| 101 | Մանկական հագուստ | 14 |
| 102 | Աղիալ | 17 |
| 103 | Մեծի հագուստ | 16 |
| 104 | Մեծի հագուստ | 13 |
| 105 | Մեծի հագուստ | 16 |
| 106 | Մանկական հագուստ | 12 |
| 107 | Մեծի հագուստ | 12 |
| 108 | Մեծի հագուստ | 13 |
| 109 | Մեծի հագուստ | 15 |
| 110 | Մեծի հագուստ | 13 |
| 111 | Մեծի հագուստ | 12 |
| 113 | Մեծի հագուստ- ճամբրուկ | 20 |
| | ընդհանուր կշիռ | 807 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 729 - Ա**
**քաղ. Երևան**

### «ԿԻՍԱԲԱՑ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19126-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 26-ի N 06/3-8/22375-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Ռուզան Շյուցի կողմից «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (մեկ տեղ, 19.7 կգ ընդհանուր քաշով, 69.99 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը բաշխվելու է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի մասնակից սոցիալապես անապահով ընտանիքներին:

2. «Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

10/5.14

Բեռի ցանկի լրամշակված տարբերակ

| անվանում | քանակ | արժեք |
|---|---|---|
| պայուսակ | 5 հատ | 5 եվրո |
| Տետր | 20 հատ | 1 եվրո |
| Գրիչ | 50 հատ | 1 եվրո |
| Վրձին | 50 հատ | 1 եվրո |
| Մատիտ | 50 հատ | 1 եվրո |
| Կարկինի հավաքածու | 3 հատ | 3 եվրո |
| Ջրաներկի տուփ | 3 հատ | 3 եվրո |
| Քանոն | 10 հատ | 1 եվրո |
| Գունավոր թուղթ | 5 տուփ | 2 եվրո |
| Ֆլոմաստեր | 5 տուփ | 2 եվրո |
| Նկարչական տետր | 5 հատ | 2 եվրո |
| Սրիչ | 10 հատ | 1 եվրո |
| Փափուկ խաղալիք | 1 հատ | 5 եվրո |
| Օծանելիք (200 մլ.) | 1 հատ | 23 եվրո |
| Դեղատուփ մեկանգամյա օգտագործման բինտերով | 1 հատ | 2 եվրո |
| Սավան | 1 հատ | 1 եվրո |
| Զուգագուլպա | 3 հատ | 1 եվրո |
| Մայկա | 4 հատ | 1 եվրո |
| Մկրատների հավաքածու | 1 տուփ | 1 եվրո |
| Վերնաշապիկ (նոր) | 4 հատ | 2 եվրո |
| Հագուստ օգտագործված | 4 հատ | 2 եվրո |
| Շորտ մանկական (նոր) | 5 հատ | 2 եվրո |
| Սեղանի ծածկոց (նոր) | 1 հատ | 1 եվրո |
| Սպորտային զգեստ | 1 հատ | 1 եվրո |
| Շորտ օգտագործված | 1 հատ | 1 եվրո |
| Մանկական բաճկոն (նոր) | 1 հատ | 3.99 եվրո |
| | | Ընդհանուր 69.99 եվրո |

«Կիսաբաց լուսամուտներ» բարեգործական հիմնադրամի
Տնօրեն Հրաչյա Մուրադյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 730 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19196-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 22-ի N 06/3-8/21914-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի Հայկական Կարմիր խաչի ընկերություն կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի կողմից ձեռք բերված փրկարարական և հրդեհային անվտանգության գույքը (6 տեղ, 7,126.1 կգ ընդհանուր քաշով, 5,482,920 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
«25» հուլիս 2016թ.

"Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում"

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նվազեցնել Հայաստանի առավել աղետավտանգ գյուղական համայնքներում բնակվող մարդկանց խոցելիությունը և ամրապնդել նրանց դիմակայունությունը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Եվրոխորհրդի մարդասիրական օգնությունների բաժինը և Դանիական, Իսլանդական և Ավստրիական Կարմիր խաչի ընկերությունները |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի, Արթիկ, Առափի, Սառնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան, Պեմզաշեն, Մեծ Սեպասար, Կապս, Կեթի, Շիրակ, Արեգնադեմ, Ջաջուռ, Ձորաշեն, Շիրակավան, Բերդաշեն, Բագրավան, Մեղրաշատ, Բավրա, Ջրափի, Լանջիկ, Ախուրիկ և Թավշուտ քաղաքային և գյուղական համայնքներ:<br>Աղետների ռիսկի կառավարման բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 199.958.015 ՀՀ դրամ /375.000 Եվրո/ - առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի և Արթիկ քաղաքային համայնքների, ինչպես նաև ծրագրի առաջին երեք փուլերում արդեն իսկ ընդգրկված/գործող Առափի, Սառնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան, Պեմզաշեն Մեծ Սեպասար, Կապս, Կեթի, Շիրակ, Արեգնադեմ Ջաջուռ, Ձորաշեն, Շիրակավան, Բերդաշեն և նոր ընդգրկվող Բագրավան, Մեղրաշատ, Բավրա, Ջրափի, Լանջիկ, Ախուրիկ և Թավշուտ գյուղական համայնքների բնակչություն: Համայնքների ընտրությունը կատարվել է Շիրակի մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ՝ հաշվի առնելով համայնքների՝ աղետների նկատմամբ ռիսկը, աղետների կրկնման հաճախականությունը, հարուցվող վնասները, խոցելի խմբերի առկայությունը, կարողությունները և այլն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.05.2016 – 30.09.2017 |

10/5,22

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **<u>Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ երեք ուղղություններով՝</u>**<br>1. Համայնքի նախապատրաստվածություն<br>2. Դպրոցների անվտանգություն<br>3. Ռիսկերի բացահայտում և Ազդարարում<br><br>**<u>Ծրագրի շրջանակներում ըստ ուղղությունների՝ նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝</u>**<br>**1. Առաջին ուղղություն**<br>1.1. Ներգրավել նոր համայնքային կամավորական թիմերի (ՀԿԹ) անդամներ /ժամանակահատված՝ 01.05-20.06.2016թ./:<br>1.2. Կազմակերպել դասընթացներ/թարմացման դասընթացներ/հրահանգչային դասընթացներ 25 ՀԿԹ-ների համար /բյուջեն **17.724.375** դրամ, ժամանակահատված՝ 20.06-31.08.2016թ. և 01.04-31.05.2017թ./:<br>1.3. Տրամադրել անհատական պաշտպանության զույք, գործիքներ և անհատական հանդերձանք նոր հիմնված 7 ՀԿԹ-երին և նոր մասնագիտական գույք հիմնված 18 ՀԿԹ-ին /բյուջեն **49.330.000** դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.07.2016թ./:<br>1.4. Կազմակերպել դաշտային ուսումնավարժություն 25 ՀԿԹ-երի մասնակցությամբ /բյուջեն **3.017.000** դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.07.2017թ./:<br>1.5. Մշակել ՀԿԹ շրջանակային փաստաթուղթ, համագործակցելով համապատասխան գործընկերների հետ /ժամանակահատված՝ բյուջեն **80.000** դրամ, 01.09-31.12.2016թ./:<br>1.6. Թարմացնել/ վերանայել Շիրակի մարզի փոխըմբռման հուշագիրը կապված ՀԿԹ-երի պահպանման և զարգացման հետ և ներգրավել նոր հիմնված 7 ՀԿԹ-երը /բյուջեն **125.500** դրամ, ժամանակահատված՝ 01.09.2016թ. – 30.04.2017թ./:<br><br>**2. Երկրորդ ուղղություն**<br>2.1. Ուսուցանել նորընտիր 87 դպրոցների ուսուցիչներին աղետի ընտանեկան պլանի (ԱԸՊ) վերաբերյալ /բյուջեն **1.055.000** դրամ, ժամանակահատված՝ 15.09-15.10.2016թ./:<br>2.2. Կազմակերպել ԱԸՊ մրցույթներ դպրոցի և մարզային մակարդակում, հաղթողներին պարգևատրել նվերներով /բյուջեն **993.000** դրամ, ժամանակահատված՝ 15.10.2016թ. և 01.03.2017թ./:<br>2.3. Դպրոցական աշակերտ չունեցող խոցելի ընտանիքներում ներկայացնել և |



| | | |
|---|---|---|
| | | մշակել ԱԸՊ, ՀԿԹ անդամների ներգրավմամբ և աջակցությամբ /բյուջեն **496.000** դրամ, ժամանակահատված՝ 01.11.2016թ. և 31.07.2017թ./:<br>2.4. Նորընտիր 7 համայնքների բնակչությանը և ծրագրում նոր ընդգրկված դպրոցների աշակերտներին տրամադրել տպագրված «Անվտանգ Ընտանիք» ձեռնարկը /բյուջեն **19.800.000** դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ./:<br>2.5. Տպագրել իրազեկման տարբեր նյութեր դպրոցների աշակերտների համար և ուսումնամեթոդական ձեռնարկներ ուսուցիչների համար /բյուջեն **20.530.000** դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ./:<br>2.6. Կազմակերպել ուսումնական տարահանումներ թիրախային 170 դպրոցներում /ժամանակահատված՝ 01.02-31.03.2017թ./:<br>2.7. Շիրակի կրթության վարչությունը կազմում և շրջանառում է արձանագրություն, համաձայն որի բոլոր թիրախ դպրոցների դասղեկները պետք է յուրաքանչյուր ամիս, դասղեկական 4 ժամերից 1 ժամը տրամադրեն աղետների ռիսկի նվազեցմանը վերաբերվող թեմաներին՝ համաձայն համատեղ մշակված ծրագրի /ժամանակահատված՝ 01.09.2016թ. և 31.05.2017թ./:<br>2.8. ԱՌՆ ազգային պլատֆորմի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ ձևավորել "Դպրոցի ԱՌՆ գրադարան" մոդել, այնուհետև տպագրել և մշակել մոդելի թվային տարբերակը բոլոր դպրոցներում տարածելու համար /բյուջեն **8.160.000** դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ./:<br>2.9. Շիրակի մարզի կրթական ոլորտի շահագրգիռ կողմերին ներկայացնել ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից մշակած ՀՀ Արտակարգ իրավիճակների և Կրթության և գիտության նախարարների հրամանով հաստատվելիք "Դպրոցների աղետների կառավարման ուղղեցույց"-ը /բյուջեն **720.000** դրամ, ժամանակահատված՝ 01.10.2016թ.-31.05.2017թ./:<br><br>**3. Երրորդ ուղղություն**<br>3.1 Հզորացնել ՀԿԽԸ մասնաճյուղերի կարողությունները կազմակերպելով ծրագրերի մշակման և առաջին օգնության դասընթացներ աշխատակազմի և կամավորների համար /բյուջեն **859.500** դրամ, ժամանակահատված՝ 01.08.2016թ.–31.08.2017թ./:<br>3.2 Աջակցել ԱՌՆ ազգային պլատֆորմին հզորացնելու ռեսուրսների մոբիլիզացման կարողությունները, կազմակերպելով համապատասխան դասընթացներ և մշակված ծրագրերի որակական ստուգում /բյուջեն **1.300.000** դրամ, ժամանակահատված՝ 01.08.2016թ.-31.08.2017թ. /:<br>3.3 Նախաձեռնել համայնքապետերի հանդիպումներ փորձի փոխանակման համար, որտեղ ներգրավված կլինեն Շիրակի մարզի ծրագրի թիրախ գյուղական |

| | | |
|---|---|---|
| | | համայնքները, «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի թիրախային գյուղական համայնքները Լոռու մարզից, ինչպես նաև ՕՔՍՖԱՄ-ի ԱՌՆ ծրագրերի թիրախային համայնքները /բյուջեն **700.000** դրամ, ժամանակահատված՝ 01.02-30.04.2017թ./:<br>3.4 Իրականացնել Խոցելիության և կարողությունների գնահատում /ԽԿԳ/ 16 թիրախային համայնքներում /բյուջեն **5.500.800** դրամ, ժամանակահատված՝ 01.08.2016թ.-31.01.2017թ./:<br>3.5 Հիմնվելով ընդլայնված ԽԿԳ բացահայտումների վրա, համայնքների դիմակայունությանը նպաստելու նպատակով կազմել Համայնքի գործողությունների պլան ուղղված աղետների նախապատրաստմանը և մեղմացմանը/կանխարգելմանը, ինչպես նաև առողջապահական, սոցիալական և տնտեսական ոլորտներին վերաբերվող հարցերին /ժամանակահատված՝ 10.01-31.03.2017թ./:<br>3.6 Ընդլայնել համայնքային ԱՌՆ գրադարանները՝ ԱՌՆ ազգային պլատֆորմի միջոցով /բյուջեն **4.400.000** դրամ, ժամանակահատված՝ 01.07-30.09.2016թ./:<br>3.7 Կազմակերպել ԱՌՆ միջազգային օրվան նվիրված միջոցառումներ՝ նկարչական մրցույթ, որին կհաջորդի օրացույցի տպագրություն /բյուջեն **1.729.000** դրամ, ժամանակահատված՝ 01.10-20.12.2016թ./:<br>3.8 Աջակցել թիրախ համայնքներին իրականացնել ԽԿԳ արդյունքում բացահայտված և առաջնայնեցված փոքրածավալ ենթածրագրեր աղետների ռիսկի նվազեցման, սոցիալական, առողջապահական և տնտեսական ոլորտներում, ինչպես նաև թիրախ դպրոցներին տրամադրել հրդեհային անվտանգության գույք (հակահրդեհային վահանակ և կրակմարիչ) և տարահանման նշաններ /բյուջեն **25.366.000** դրամ, ժամանակահատված՝ 01.06-30.09.2016թ. և 01.04-30.09.2017թ./:<br>3.9 Ջրամբարի վտանգի տակ գտնվող թիրախային 8 համայնքներում հիմնել Վաղ ազդարարման համակարգ, ներառյալ տեխնիկական և ծրագրային ապահովումները /բյուջեն **1.120.000** դրամ, ժամանակահատված՝ 01.08-31.10.2016թ./:<br>3.10 Ջրամբարի վտանգի ներքո գտնվող առավել ռիսկային թիրախային համայնքներում կազմակերպել իրազեկման քարոզարշավներ թիրախային համայնքներում /բյուջեն **1.222.000** դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.08.2017թ./:<br>3.11 Ջրամբարի վտանգի ներքո գտնվող առավել ռիսկային թիրախային |



| | | |
|---|---|---|
| | | համայնքներում կազմակերպել ուսումնավարժանքներ /բյուջեն **639.000** դրամ, ժամանակահատված՝ 01.06-31.08.2017թ./:<br>3.12 Կազմակերպել ծրագրի մեկնարկի և ավարտի հանդիպումներ ազգային մակարդակում և մասնակցել համապատասխան միջազգային հանդիպումներին /բյուջեն **900.000** դրամ, ժամանակահատված՝ 01.05.2016թ.-30.09.2017թ./:<br>3.13 Պարբերաբար կազմակերպել մարզային համակարգման հանդիպումներ Շիրակի մարզում /բյուջեն **465.250** դրամ, ժամանակահատված՝ 01.06.2016թ.-30.09.2017թ./:<br><br>Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կազմում են **33.725.590** դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝<br>1. Ծրագրի շրջանակներում արդեն իսկ ձևավորված 18 համայնքային թիմերի և նախատեսված 7 նոր թիմերի համար ձեռք է բերվելու համապատասխան գույք /սաղավարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ, վրան և այլն/, որի գումարը կազմում է **49.330.000** դրամ, որից 28.059.488,8 դրամի ապրանքները ենթակա են ներմուծման: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արձագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին:<br>2. Բնակչության իրազեկման բարձրացման միջոցառումների իրականացման և դպրոցներում ԱՌՆ մշակույթի սերմանման նպատակով տպագրվելու են ուսումնական նյութեր, դպրոցներում հիմնվելու են ԱՌՆ գրադարաններ և ընդլայնվելու են համայնքային ԱՌՆ գրադարանները՝ ԱՌՆ ազգային պլատֆորմի միջոց ով, որի գումարը կազմում է 52.890.000 դրամ:<br>3. Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, կրակմարիչ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որի գումարը կազմում է 37.526.425 դրամ:<br>4. Թիրախային համայնքների վաղ ազդարարման կարողությունները |

| | | |
|---|---|---|
| | | զարգացնելու համար տրամադրվելու է տեխնիկական աջակցություն և գույք, որի գումարը կազմում է **1.120.000** դրամ:<br>5. Համայնքային փոքրածավալ կանխարգելման ծրագրերի համար ձեռք են բերվելու նյութեր, իսկ շահառու դպրոցներին տրամադրվելու է հրդեհային անվտանգության գույք, որի գումարը կազմում է **25.366.000** դրամ, որից **11.636.852** դրամի հրդեհային անվտանգության գույքը ենթակա է ներմուծման:<br>6. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են **33.725.590** դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ **33.725.590** դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է Շիրակի մարզպետարանի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության՝ հատկապես նրա Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի և Շիրակի մարզային փրկարար ծառայության հետ, "Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ" հիմնադրամի, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և նրա Շիրակի մարզային ստորաբաժանման, 27 թիրախային քաղաքային և գյուղական համայնքների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում կազմակերպվելուն են եռամսյա մարզային համակարգման հանդիպումներ, որը ղեկավարվելու է Շիրակի մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել եռամսյակային, միջանկյալ և ավարտական հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես |



| | | |
|---|---|---|
| | | իրականացվելու է Շիրակի մարզում իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպումներ Երևանում և Շիրակի մարզում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: |

10/5.22

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 731 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1277-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի հուլիսի 27-ի թիվ 426 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Էօրնեկեան վարժարանի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1277-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի օգոստոսի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 732 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1268-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի հուլիսի 27-ի թիվ 425 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գարեգին Ա կրթական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-1268-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2016 թվականի սեպտեմբերի 10-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 733 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-300-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19401-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 31-ի N 06/3-8/22906-16 եզրակացությունները, և հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2016 թվականի հուլիսի 27-ի N 427 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի արտաքին լուսավորության աշխատանքներ» ծրագրի մասին» (2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1148-Ա որոշման խմբագրությամբ) N Մ-300-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «23,953,460 դրամ» բառերը փոխարինել «24,257,210 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «10 դեկտեմբերի 2015 թ.» բառերը փոխարինել «10 սեպտեմբերի 2016 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 734 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷՕՐՆԵԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19414-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի օգոստոսի 2-ի N 02/14/-974316 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/22908-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 236,998,865 դրամ արժողությամբ «Էօրնեկեան վարժարանի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2016 թվականի հուլիսի 25-ին կնքված՝ N 22Ա/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահավորման աշխատանքների իրականացում՝ 236,998,865 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«01» օգոստոս 2016 թ.

### Էօրնեկեան վարժարանի կահավորում

### Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան վարժարանի կահավորումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 236,998,865 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Էօրնեկեան վարժարանը և աշակերտները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 25 հուլիս 2016թ. – 01 նոյեմբեր 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան վարժարանի կահավորումը՝ 236.998,865 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 25 հուլիս 2016թ. – 01 նոյեմբեր 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան վարժարանի կահավորումը՝ 236.998,865 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 735 - Ա**
**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՆՁԱՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 31-ի N 07/80-2/19443-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի օգոստոսի 2-ի N 02/14/9744-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22843-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 408,203,560 դրամ արժողությամբ «Գանձատան մասնակի նորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ ինժեներինգ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531764) 2016 թվականի հուլիսի 19-ին կնքված՝ N 04Շ/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի նորոգման, օդորակման և օդափոխության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 408,203,560 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«27» հուլիս 2016 թ.

Գանձատան մասնակի նորոգում

N-10/3

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գանձատան մասնակի նորոգման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 05531764 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 408,203,560 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 19 հուլիս 2016թ. – 20 հունվար 2018թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակն է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գանձատան մասնակի նորոգման աշխատանքները՝ 408,203,560 ՀՀ դրամ գումարով, առանց ԱԱՀ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 19 հուլիս 2016թ. – 20 հունվար 2018թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գանձատան մասնակի նորոգման աշխատանքները ՝ 408,203,560 ՀՀ դրամ գումարով ՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ [illegible]ություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 736 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՅՏԱՄԱԾԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 31-ի N 07/80-2/19444-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի օգոստոսի 2-ի N 02/14/9742-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22819-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 16,236,850 դրամ արժողությամբ «Մայր տաճարի որմնանկարների մաքրման համար փայտամածերի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2016 թվականի հուլիսի 26-ին կնքված՝ N 08Ա/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է որմնանկարների մաքրման համար փայտամածերի տեղադրում՝ 16,236,850 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«27» հուլիս 2016 թ.

**Մայր Տաճարի որմնանկարների մաքրման համար փայտամածերի տեղադրում**

# ԾՐԱԳԻՐ

դր 10/4

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կազմակերպել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի որմնանկարների մաքրման համար փայտամածերի տեղադրում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված.արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 16,236,850 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգևորականները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 26 հուլիս 2016թ. – 30 սեպտեմբեր 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի որմնանկարների մաքրման համար փայտամածերի տեղադրում ՝ 16,236,850 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 26 հուլիս 2016թ. – 30 սեպտեմբեր 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Մայր Տաճարի որմնանկարների մաքրման համար փայտամածերի տեղադրում աշխատանքները՝ 16,236,850 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 737 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 3-ի N 07/80-2/19604-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/23017-16 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ է.*

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված բեռները (2 հատ կտրող և 4 հատ հարթեցնող հաստոցներ՝ 6,680 կգ ընդհանուր քաշով, 1,910,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ և շինարարական նյութեր՝ 23,760 կգ ընդհանուր քաշով, 252,171.97 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուս» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 738 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 3-ի N 07/80-2/19641-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 3-ի N 06/3-8/23210-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Թուրքիայի Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված մարմարի (մեկ տեղ, 20,920 կգ ընդհանուր քաշով, 2,719 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 739 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱԿ-Ի ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 18.03.2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 1/06.2/11414-16 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19395-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 02/14/9147-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 01/18.2/2836-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 27-ի N 06/3-8/22563-16 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2016 թվականի հուլիսի 22-ի N 1/2/3/1-1/4041-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ո ւ մ  է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 204,850,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016-2017 թվականների» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին ու Արարատի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Ի. Աղաբեկյան
«22» «07» 2016թ.

# ԾՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016-2017 թվականների

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի աղբավայրի բարեկարգում և ենթակառուցվածքների ստեղծման շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՅՈՒՆԻԴՕ), Ավստրիա, Վիեննա, A-1400, P.O. Box 300 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արարատի մարզ, ք.Արարատ:<br>Շրջակա միջավայրի պահպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի համար «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում 204850.0 հազար դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ, ք.Երևան, Չարենցի 46: Ծրագրի ավարտից հետո աղբավայրի շահագործումը հանձնվելու է Արարատ քաղաքի համայնքին |

10/4

<table>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>01.07.2016թ. – 31.12.2017թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ծախսերի անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>ՀՀ բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016-2017 թվականների ծրագիր՝ 01.07.2016թ. – 31.12.2017թ. – 204850.0 հազար դրամ, այդ թվում (ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների)՝<br>
1. «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձ - 13737.0 հազար դրամ (2016 թվականի 3-4-րդ եռամսյակ, 2017 թվականի 1-ին կիսամյակ),<br>
2. Վարչական ծառայությունների ձեռքբերում (2017 թվականի 4-րդ եռամսյակ) – 1205.0 հազար դրամ, այդ թվում
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th></tr>
<tr><td>1. Աուդիտորական ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>1205.0</td></tr>
</table>
3. Համակարգչային ծառայությունների ձեռքբերում (2017 թվականի 2-4-րդ եռամսյակներ) – 7230.0 հազար դրամ, այդ թվում<br>
4.
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամ)</th></tr>
<tr><td>1. Ինտերնետ կայքէջի ստեղծման և զարգացման ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>2410.0</td></tr>
<tr><td>2. Տվյալների բազայի ստեղծման ծառայություններ</td><td>դրամ</td><td>1</td><td>4820.0</td></tr>
</table>
5. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (2016 թվականի 3-4-րդ եռամսյակ, 2017 թվականի 1-ին կիսամյակ) – 2578.7 հազար դրամ, այդ թվում՝</td></tr>
</table>

10/4

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1. Շապիկներ (գովազդային) | դրամ | 1 | 819.4 |
| 2. Գլխարկներ (գովազդային | դրամ | 1 | 795.3 |
| 3. Գրասենյակային նյութեր և պարագաներ | դրամ | 1 | 964.0 |

6. Հատուկ նպատակային այլ նյութեր (2016 թվականի 3-4-րդ եռամսյակ, 2017 թվականի 1-ին կիսամյակ) – **795.3 հազար դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1. Բաժակներ (գովազդային) | դրամ | 1 | 795.3 |

7. Այլ ծախսեր (2016 թվականի 3-4-րդ եռամսյակ, 2017 թվականի 1-4-րդ եռամսյակներ) – **29884.0 հազար դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1. Տպագրական աշխատանքներ (հաշվետվությունների հրապարակում, իրազեկության բրոշյուրներ և այլն) | դրամ | 1 | 5784.0 |
| 2. Միջազգային պարբերականներում հրապարակումներ, կոնֆերանսներին մասնակցություն | դրամ | 1 | 4820.0 |
| 3. Իրազեկության բարձրացման նպատակով սեմինարների, աշխատաժողովների, կոնֆերանսների կազմակերպման ծառայություններ (քանակը 7, ներառյալ մասնակիցների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախս, գիշերակաց, օրապահիկ) | դրամ | 1 | 16870.0 |
| 4. Լաբորատոր հետազոտության ծառայություններ | դրամ | 1 | 2410.0 |

8. Շենքերի և շինությունների կառուցում (2016 թվականի 4-րդ եռամսյակ, 2017 թվականի 1-4-րդ եռամսյակներ) – **132550.0 հազար դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1. Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման, մարդու առողջության և շրջակա միջավայրի բացասական ներգործության կանխարգելում (ներառյալ անհրաժեշտ հատուկ սարքավորումները) | դրամ | 1 | 130140.0 |
| 2. Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | դրամ | 1 | 2410.0 |

9. Նախագծահետազոտական ծախսեր (2016 թվականի 3-րդ եռամսյակ) – **16870.0 հազար դրամ,** այդ թվում՝

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1. Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման, մարդու առողջության և շրջակա միջավայրի բացասական ներգործության կանխարգելման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ | դրամ | 1 | 16870.0 |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Վարչական ծառայությունների ձեռքբերում – **1205.0 հազար դրամ,**<br>2. Համակարգչային ծառայությունների ձեռքբերում – **7230.0 հազար դրամ,**<br>3. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում – **2578.7 հազար դրամ,**<br>4. Հատուկ նպատակային այլ նյութեր – **795.3 հազար դրամ,**<br>5. Այլ ծախսեր – **29884.0 հազար դրամ,**<br>6. Շենքերի և շինությունների կառուցում – **132550.0 հազար դրամ,**<br>7. Նախագծահետազոտական ծախսեր – **16870.0 հազար դրամ:** |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր - **15906.0 հազար դրամ**, այդ թվում<br>1. «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձ - **13737.0 հազար դրամ,**<br>2. Աուդիտորական ծառայություններ - 1205.0 հազար դրամ,<br>3. Գրասենյակային նյութեր և պարագաներ – **964.0 հազար դրամ:**<br>Բոլոր ծախսերը, բացառությամբ կազմակերպչական ծախսերի, ուղղված են շահառուներին: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Արարատի մարզպետարանի, Արարատի քաղաքապետարանի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգ[illegible] նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

ՏՆՕՐԵՆ Ա.ԼԱ[illegible]

10/5.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 740-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 07/80-2/19031-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 22-ի N ԱՄ/22.2/18158-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22223-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և լաբորատոր պարագաներ՝ 18 արկղ, 241 կգ քաշով, 11,068.01 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 737.78 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

[redacted]

| Նո | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Լինեզոլիդ, 100մգ/5մլ, հատիկներ ներքին ընդունման համար, 150 մլ, շիշ | 33 | 9275.31 |
| 2 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 10մլ, ամպուլ | 8400 | 986.16 |
| 3 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 10մլ, ամպուլ | 6500 | 763.1 |
| 4 | (գլյուկոմետր Optium Xceed), ստրիպ | 200 | 43.44 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 11068.01 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-741-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19096-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22221-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01538594) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-023-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷՅՋՎԻԷՅՍԻ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00455366) 2016 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ N 07/2016/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հանրապետական հակատուբերկուլյոզային դիսպանսերի օդափոխության համակարգի անխափան գործարկումն ապահովելու նպատակով գազային ջրատաքացուցչի և դրա բաղադրիչ մասերի ձեռքբերում՝ 10,230,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-742-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19370-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22832-16 ու եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Նիդերլանդների Թագավորությունից՝ որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հասցեով ուղարկված համակարգչային սարքավորումների (մեկ տեղ, 85 կգ ընդհանուր քաշով, 768.35 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-743-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19100-16, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 1/06/896-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 26-ի N 06/3-8/22376-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի վոլեյբոլի կոնֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (5 վոլեյբոլի ցանց՝ մեկ տեղ, 21 կգ ընդհանուր քաշով, 400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ և 60 վոլեյբոլի գնդակ՝ 2 տեղ, 18.6 կգ ընդհանուր քաշով, 180 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, բեռների փոխադրման ծախսերը կազմել են 1138.65 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-744-Ա**
**քաղ. Երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ**
**ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19205-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 28-ի N 06/3-8/22602-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված կահույքի (107 տեղ, 3,760 կգ ընդհանուր քաշով, 186,574.07 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,492,500 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-745-Ա**
**քաղ. Երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19383-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22842-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված գործվածքի (13 տեղ, 535 կգ ընդհանուր քաշով, 27,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,062 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-746-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 27-ի N 07/80-2/19193-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 28-ի N 06/3-8/22600-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքները (սանիտարական կերամիկա, ծորակներ, սանհանգույցի պարագաներ՝ 17 տեղ, 631.10 կգ ընդհանուր քաշով, 2,789,093.16 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 50,000 ռուսական ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-747-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 07/80-2/19396-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 29-ի N 06/3-8/22837-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խաղադաշտերը նշագծելու ներկը և մշակող տրակտորների պահեստամասերը (մեկ տեղ, 625 կգ ընդհանուր քաշով, 3,828.60 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-748-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-434-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 07/80-2/19029-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22224-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Համայնքներում խաղադաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-434-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) խաղադաշտի արհեստական խոտածածկ՝ 16 տեղ, 14,629.66 կգ ընդհանուր քաշով, 52,182.87 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «ՄՃՓ» ՏՄ.

2) խաղադաշտի արհեստական խոտածածկ, խոտածածկի տեղադրման նյութեր, պարագաներ, մշակման տեխնիկա և մարզագույք՝ 14 տեղ, 15,129.85 կգ ընդհանուր քաշով, 64,787.13 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «Արարատյան» ՏՄ.

3) խաղադաշտի արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 115 տեղ, 117,280 կգ ընդհանուր քաշով, 18,492.80 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 26,000 եվրո, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-749-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-600-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19063-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22220-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արարատ մարզադպրոցի խաղադաշտի կառուցում» ծրագրի մասին» N Մ-600-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) խաղադաշտի արհեստական խոտածածկ, խոտածածկի տեղադրման նյութեր, պարագաներ, մշակման տեխնիկա և մարզագույք՝ 146 տեղ, 29,857.95 կգ ընդհանուր քաշով, 116,970 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 11,000 եվրո, «Արարատյան» ՏՄ.

2) խաղադաշտի արհեստական խոտածածկի ռետինե գնդիկներ՝ 116 տեղ, 118,400 կգ ընդհանուր քաշով, 18,668.80 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 26,000 եվրո, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                                     Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-750-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 07/80-2/19025-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22036-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Իսպանիայի Թագավորության քաղաքացի Ժոզե Մարիա Ֆարգաս Տեքսիդոյի (անձնագիր՝ AAD605809) 2016 թվականի հունիսի 2-ին կնքված՝ N 01-02.06.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-751-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 07/80-2/19027-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22037-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Սևանա Ջագըրյանի հետ (անձնագիր՝ 10CA61027) 2016 թվականի հունիսի 6-ին կնքված՝ N 01-06.06.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ԱՄՆ-ի քաղաքացի Սյուզան Ադամսի հետ (անձնագիր՝ 456999392) 2016 թվականի հունիսի 17-ին կնքված՝ N 01-17.06.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 980,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Արաշ Ազադիի հետ (անձնագիր՝ K95577054) 2016 թվականի հուլիսի 11-ին կնքված՝ N 01-11.07.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-752-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 25-ի N 07/80-2/19030-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22038-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2016 թվականի հուլիսի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թերթիկների տպագրման աշխատանքների իրականացում՝ 144,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Քաժալ Մալեքզադեհի հետ (անձնագիր՝ K95576797) 2016 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N 01-01.06.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 671,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-753-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-252-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19132-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22217-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2016 թվականի հուլիսի 21-ի N 069 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու տանիքի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-252-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի հուլիսի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-754-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 3-ի N 07/80-2/19636-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/23021-16 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի օգոստոսի 2-ի N 1/06/923-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված Հայաստանի Ազգային հավաքականների մարզահագուստի տարբերանշանների (1 տեղ, 4 կգ ընդհանուր քաշով, 1,900 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 132 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-755-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 3-ի N 07/80-2/19642-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 3-ի N 06/3-8/23212-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված կահույքի (65 տեղ, 2,840 կգ ընդհանուր քաշով, 179,467 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,731,836 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-756-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 3-ի N 07/80-2/19607-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/23009-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդորակիչները (5 տեղ, 900 կգ ընդհանուր քաշով, 13,344.67 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 984,706 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ-757-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 3-ի N 07/80-2/19688-16 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/23011-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2016 թվականի հուլիսի 21-ին կնքված՝ N 10-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գովազդային ծառայությունների մատուցում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԴԱՐ 21 հեռուստարընկերություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01817024) 2016 թվականի հուլիսի 25-ին կնքված՝ N 38 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գովազդային ծառայությունների մատուցում՝ 228,800 դրամի չափով (գովազդային ծառայության մեկ րոպեի արժեքը՝ 4,160 դրամ), առանց ավելացված արժեքի հարկի.



| 100 | Հատ | Նորածնի հագուստ | | 316.17 | |
| 30 | Հատ | Փափուկ խաղալիք | | 78.16 | |
| 300 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 428.12 | |
| 160 | Հատ | Գնդակ | | 535.37 | |
| 12 | Հատ | Ձեռքի պոմպ | | 48.62 | |
| 80 | Հատ | Մանկական ծածկոց | | 250.71 | |
| 35 | Հատ | Արևային ակնոց | | 119.71 | |
| 35 | Հատ | Բարձ | | 71.88 | |
| 288 | Հատ | Հիգիենիկ տակդիր | | 267.35 | |
| 100 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 17.88 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 100 | Հատ | Կանացի բլուզկա | | 584.00 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 180 | Հատ | Տաբատ | | 967.78 | |
| 250 | Հատ | Շապիկ | | 744.67 | |
| 35 | Հատ | Գլխարկ | | 39.21 | |
| 45 | Հատ | Մանկական բլուզկա | | 177.49 | |
| 100 | Հատ | Նորածնի հագուստ | | 316.17 | |
| 30 | Հատ | Փափուկ խաղալիք | | 78.16 | |
| 300 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 428.12 | |
| 160 | Հատ | Գնդակ | | 535.37 | |
| 12 | Հատ | Ձեռքի պոմպ | | 48.62 | |
| 77 | Հատ | Մանկական ծածկոց | | 241.31 | |
| 35 | Հատ | Արևային ակնոց | | 119.71 | |
| 35 | Հատ | Բարձ | | 71.88 | |
| 288 | Հատ | Հիգիենիկ տակդիր | | 267.35 | |
| 100 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 17.88 | |
| 50 | Հատ | Կանացի բլուզկա | | 292.00 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 100 | Հատ | Տաբատ | | 537.65 | |
| 150 | Հատ | Շապիկ | | 446.80 | |
| 20 | Հատ | Գլխարկ | | 22.41 | |
| 20 | Հատ | Մանկական բլուզկա | | 78.88 | |
| 50 | Հատ | Նորածնի հագուստ | | 158.08 | |
| 20 | Հատ | Փափուկ խաղալիք | | 52.10 | |
| 160 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 228.33 | |
| 80 | Հատ | Գնդակ | | 267.68 | |
| 6 | Հատ | Ձեռքի պոմպ | | 24.31 | |
| 40 | Հատ | Մանկական ծածկոց | | 125.36 | |
| 20 | Հատ | Արևային ակնոց | | 68.40 | |
| 20 | Հատ | Բարձ | | 41.08 | |
| 192 | Հատ | Հիգիենիկ տակդիր | | 178.24 | |
| 100 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 17.88 | |
| 50 | Հատ | Կանացի բլուզկա | | 292.00 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 100 | Հատ | Տաբատ | | 537.65 | |
| 150 | Հատ | Շապիկ | | 446.80 | |
| 20 | Հատ | Գլխարկ | | 22.41 | |
| 20 | Հատ | Մանկական բլուզկա | | 78.88 | |
| 60 | Հատ | Նորածնի հագուստ | | 189.70 | |
| 20 | Հատ | Փափուկ խաղալիք | | 52.10 | |
| 180 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 256.87 | |
| 100 | Հատ | Գնդակ | | 334.60 | |
| 6 | Հատ | Ձեռքի պոմպ | | 24.31 | |
| 50 | Հատ | Մանկական ծածկոց | | 156.70 | |
| 20 | Հատ | Արևային ակնոց | | 68.40 | |
| 20 | Հատ | Բարձ | | 41.08 | |
| 192 | Հատ | Հիգիենիկ տակդիր | | 178.24 | |
| 100 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 17.88 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 50 | Հատ | Կանացի բլուզկա | | 292.00 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 100 | Հատ | Տաբատ | | 537.65 | |
| 150 | Հատ | Շապիկ | | 446.80 | |
| 20 | Հատ | Գլխարկ | | 22.41 | |
| 20 | Հատ | Մանկական բլուզկա | | 78.88 | |
| 50 | Հատ | Նորածնի հագուստ | | 158.08 | |
| 20 | Հատ | Փափուկ խաղալիք | | 52.10 | |
| 160 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 228.33 | |
| 80 | Հատ | Գնդակ | | 267.68 | |
| 6 | Հատ | Ձեռքի պոմպ | | 24.31 | |
| 40 | Հատ | Մանկական ծածկոց | | 125.36 | |
| 20 | Հատ | Արևային ակնոց | | 68.40 | |
| 20 | Հատ | Բարձ | | 41.08 | |
| 192 | Հատ | Հիգիենիկ տակդիր | | 178.24 | |
| 100 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 17.88 | |
| 212 | Հատ | Կանացի բլուզկա | | 1238.09 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| 358 | Հատ | Տաբատ | | 1924.80 | |
| 318 | Հատ | Շապիկ | | 947.22 | |
| 48 | Հատ | Գլխարկ | | 53.78 | |
| 72 | Հատ | Մանկական բլուզկա | | 283.98 | |
| 137 | Հատ | Նորածնի հագուստ | | 433.15 | |
| 75 | Հատ | Փափուկ խաղալիք | | 195.39 | |
| 160 | Կոմպլ. | Հիգիենիկ կոմպլեկտ | | 228.33 | |
| 228 | Հատ | Գնդակ | | 762.90 | |
| 5 | Հատ | Ձեռքի պոմպ | | 20.26 | |
| 40 | Հատ | Մանկական ծածկոց | | 125.36 | |
| 20 | Հատ | Արևային ակնոց | | 68.40 | |
| 20 | Հատ | Բարձ | | 41.08 | |
| 1 | Հատ | Պալետ տեղափոխող սարք | | 16.77 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 6935.10 | 55885.00 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 768 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 2-ի N 07/80-2/19553-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի օգոստոսի 1-ի N ԱՄ/22.2/8480-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 29-ի N 06/3-8/22834-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական բժշկական սարքավորումները և պարագաները (15 պալետ, 4,260 կգ ընդհանուր քաշով, 127,706 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 5,900 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 769 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 4

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19732-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 3-ի N 06/3-8/13317-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀՈՒՆ-ՍԱՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2016 թվականի հուլիսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի Այգեհովիտի համայնքի մշակույթի տանը գտնվող Սմարթ ապահով սենյակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 16,484,290 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 770 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19791-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 4-ի N 06/3-8/13484 -16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Հորիզոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513552) 2016 թվականի հուլիսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնախույս պոմպի ձեռքբերում՝ 883,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 771 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19790-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 4-ի N 06/3-8/ 23488-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09806674) 2016 թվականի հուլիսի 13-ին կնքված N 1044-130716 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տաթևի վանական համալիրի «Սուրբ Աստվածածին» եկեղեցու վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 132,843,055 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 772 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-647-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 2-ի N 07/80-2/19554-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի 1-ի N 06/3-8/23010-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-647-Ա որոշման 1-ին կետում «13,238.39 եվրո արժեքով» բառերը փոխարինել «14,203.39 եվրո արժեքով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 773 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-658-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19742-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի 4-ի N 06/3-8/23461-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» N Մ-658-Ա որոշման 1-ին կետում «7,354.10 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «7,040 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 774 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-659-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19741-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի 4-ի N 06/3-8/23480-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» N Մ-659-Ա որոշման 1-ին կետում «6,690.60 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «7,900 կգ ընդհանուր քաշով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**8 օգոստոսի 2016 թվականի N Մ - 775 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի օգոստոսի 5-ի նիստին)**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-561-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 5-ի N 07/80-2/19842-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի 8-ի N 6/3-8/23639-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)» N Մ-561-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «58.50 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «191 կգ ընդհանուր քաշով» բառերով.

2) «ՄՓ և ՍԱՓԱՄ մաքսատուն» բառերը փոխարինել «Զվարթնոց» մաքսատուն» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 776- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19737-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 1-ի N 06/3-8/23008-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2016 թվականի հուլիսի 28-ին կնքված՝ N 048/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների կատարում՝ 4,549,939 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 777 Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N Մ-633-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19734-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 4-ի N 06/3-8/23342-16 եզրակացությունները,* **որոշում է.**

1. Սահմանել, որ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01212788) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի հուլիսի 11-ի «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող և սոցիալական դժվարին իրավիճակում ապրող երեխաների սոցիալական աջակցություն» ծրագրի մասին» N Մ-633-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ Երևան քաղաքի մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ Դիլիջան քաղաքում գտնվող «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված N 000207 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 222,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ք. Իջևան «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի օգոստոսի 20-ին կնքված N 015539 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի համար էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Բերդ քաղաքի «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված N 200570 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի համար էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 260,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Նոյեմբերյան քաղաքի «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի փետրվարի 21-ին կնքված N 000162 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի համար էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 144,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 778 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՄՓԱՔԹ ԵՎ ՍՔԱՅ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի օգոստոսի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 9,774,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամառային ճամբարի կազմակերպում Վորլդ վիժն Հայաստանի ԻՄՓԱՔԹ և ՍՔԱՅ ակումբների առաջնորդների համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Նորալուսին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08602616) 2016 թվականի հուլիսի 8-ին կնքված N WVA/ADPs/SC-16/001/Addit.01/FY16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամառային ճամբարի կազմակերպում՝ 9,774,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Տավուշի մարզերի մարզպետներին:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

08 հուլիսի, 2016թ.

**«Ամառային ճամբարի կազմակերպում Վորլդ Վիժն Հայաստանի ԻՄՓԱՔԹ և ՍՔԱՅ ակումբների առաջնորդների համար»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | ՀՀ Երևանի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզերի յոթանասունվեց համայնքների 15-21 տարեկան երեխաների ներգրավում նշված մարզերում իրականացվող երեխայի բարեկեցությանն (կրթություն, առողջապահություն, երեխաների պաշտպանություն, քրիստոնեական դաստիարակություն) ուղղված ծրագրերում, երեխաների ֆիզիկական զարգացում և ակտիվ հանգստի կազմակերպում ամառային ճամբարում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցող գրասենյակներ.<br>*ԱՄՆ աջակցող գրասենյակ*<br>Հասցեն՝ 34834, Վեերհուզեր, Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ.: 1-888-511-6548<br>*Կանադայի աջակցող գրասենյակ*<br>Հասցեն՝ 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada, հեռ.: 1-866-595-5550<br>*Թայվանի աջակցող գրասենյակ*<br>Հասցեն՝ 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան, հեռ.: +886-2-2175-1995<br>*Շվեյցարիայի աջակցող գրասենյակ*<br>Հասցեն՝ Kriesbachstrasse 30, 8600 Dubendorf, Switzerland, հեռ.: +41 44 510 1515<br>*Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ*<br>Հասցեն՝ Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR UK, հեռ.: +44 1908 841000<br>*Ֆրանսիայի աջակցող գրասենյակ*<br>Հասցեն՝ 7 ռուէ Փաքուիր, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռ.: `+01 49 49 11 12<br>Գերմանիայի աջակցող գրասենյակ<br>Հասցեն՝ Am Houiller Platz 4 61381 Friedrichsdorf |

| | | |
|---|---|---|
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փող. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37410749146 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ, գ. Հանքավան<br>Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **9,774,000** (ինը ,իլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ԻՄՓԱՔԹ և ՍՔԱՅ ոչ ֆորմալ կրթության ակումբների ակումբների առաջնորդները և մասնակից երեխաները ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի և Երևան քաղաքի շահառու 76 համայնքների 1998-2001թթ. Ծնված ընտանիքների 367 երեխաներ, ընդ որում ըստ մարզերի.<br><br>***Մարզ*** — ***Երեխաների թիվը*** — ***Երեխաների տարիքային խումբը***<br>Շիրակ — 28 — 15-21 տարեկան<br>Արագածոտն — 30 — 15-21 տարեկան<br>Գեղարքունիք — 35 — 15-21 տարեկան<br>Սյունիք — 197 — 15-21 տարեկան<br>Լոռի — 32 — 15-21 տարեկան<br>Տավուշ — 20 — 15-21 տարեկան<br>Երևան — 25 — 15-21 տարեկան<br>**Ընդամենը՝** — **367** |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 08 հուլիսի, 2016թ. – 15 օգոստոսի, 2016թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2016թ. հուլիսի 08-ից մինչև 2016թ. օգոստոսի 15-ը ընկած ժամանակահատվածում ամառային ճամբար կազմակերպել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի շահառու 76 համայնքների 367 երեխայի, ինչպես նաև ջոկատավարների և պատասխանատուների համար (ճամբարային 2 հերթափոխ ՝ 3 և 4 օր տևողությամբ)՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի. |

| *№* | *Հերթափոխի սկիզբը* | *Հերթափոխի ավարտը* | *Մասնակիցների թիվը* | *Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ)* |
|---|---|---|---|---|
| 1. | 8 հուլիսի 2016թ.<br>8 հուլիսի 2016թ. | 11 հուլիսի 2016թ.<br>11 հուլիսի 2016թ. | 200 | 3,300,000<br>2,800,000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | (սուրճի ընդմիջում մասնակիցների և հյուրերի համար) |
| | 1 օգոստոսի 2016թ. | 5 օգոստոսի 2016թ. | 167 | 3,674,000 |
| | | Ընդամենը՝ | 367 | **9,774,000** |

«Նորալուսին» ՍՊԸ-ի մատուցած ծառայությունների արժեքը կազմում է 9,774,000 (ինը միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **9,774,000** (ինը միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագիրն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է կազմակերպություն և ամառային ճամբարի կազմակերպման պայմանագիր է կնքել «Նորալուսին» ՍՊԸ-ի հետ, որը ՀՀ Կոտայքի մարզի Հանքավան գյուղում գտնվող «Զեփյուռ» ճամբարում 2 հերթափոխով ամառային հանգիստ կկազմակերպի ընդհանուր թվով 367 մասնակցի համար: Կազմակերպիչն ապահովելու է հետևյալ պայմանները յուրաքանչյուր հերթափոխում ընդրգկված մասնակիցների համար.<br>✓ ննջարանային մասնաշենք, լվացքատուն, սանհանգույցներ, ցնցուղ ընդունելու համար առանձնացված տարածք, խոհանոց՝ բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, ճաշարան՝ անհրաժեշտ քանակի սեղաններով և աթոռներով, խաղահրապարակ, մարզահրապարակ և երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու համար այլ անհրաժեշտ տարածքներ և տաղավարներ.<br>✓ համապատասխան քանակի ննջասենյակներ՝ մեկ ննջասենյակ առավելագույնը 10-12 հոգու համար հաշվարկով.<br>✓ չորսանգամյա բարձրորակ սնունդ (նախաճաշ, ճաշ, հետճաշիկ և ընթրիք)<br>✓ 24-ժամյա տաք և սառը ջրամատակարարում.<br>✓ բուժկետ՝ հագեցված համապատասխան դեղորայքով և բուժական պարագաներով.<br>✓ ճամբարի անվտանգությունը համապատասխան քանակի պահակային կետերի միջոցով.<br>✓ կազմակերպել յուրաքանչյուր հերթափոխի երեխաների համար զանազան սպորտային, մշակութային, հոգևոր միջոցառումների, արշավներ և ակտիվ հանգստի համար նախատեսված խաղեր և այլ միջոցառումներ:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում **9,774,000** (ինը միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզպետարանների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվելու է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Գյումրու, Ամասիայի, Թալինի, Ապարանի, Գավառի, Վարդենիսի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Նոյեմբերյանի, Իջևանի, Ստեփանավանի և Ալավերդու Տարածքային Զարգացման Ծրագրերի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի, Կանադայի, Թայվանի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների բաժնի ղեկավար

Շաղիկ Մարուխյան

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 779 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-40-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի հուլիսի 27-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Սլովենիայի հանրապետությունից «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված և ներմուծված բեռները, (պատուհաններ և սարքավորումներ 22,276 եվրոին համարժեք դրամ արժողությամբ, իսկ փոխադրման և այլ ծախսերը կազմում են 898,000 ՀՀ դրամ, Արարատյան Տ/Մ) ներմուծվում են վերոնշյալ որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի NՄ-277-Ա, 2013 թվականի մարտի 15-ի NՄ-158-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի NՄ-101-Ա, 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1234-Ա և 2015 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1169-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 օգոստոսի 2016 թվականի N Մ - 780 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N Մ-633-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 4-ի N 07/80-2/19734-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 4-ի N 06/3-8/23342-16 եզրակացությունները,* **որոշում է.**

1. Սահմանել, որ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01212788) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի հուլիսի 11-ի «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հաշմանդամություն ունեցող և սոցիալական դժվարին իրավիճակում ապրող երեխաների սոցիալական աջակցություն» ծրագրի մասին» N Մ-633-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ Երևան քաղաքի մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ Դիլիջան քաղաքում գտնվող «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի հուլիսի 28-ին կնքված N 000207 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 222,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ք. Իջևան «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2014 թվականի օգոստոսի 20-ին կնքված N 015539 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի համար էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Բերդ քաղաքի «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2015 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված N 200570 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի համար էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 260,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Նոյեմբերյան քաղաքի «Աղստև» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի փետրվարի 21-ին կնքված N 000162 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի օգոստոսի 1-ից 2017 թվականի օգոստոսի 1-ը ժամանակահատվածի համար էլեկտրական էներգիայի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 144,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 օգոստոսի 2016 թվականի N Մ- 781 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի օգոստոսի 3-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից, «Thoms shoes» LLC միջոցով՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (38064 զույգ 1586 արկղ, 19,320.85 կգ ընդհանուր քաշով, 78,615.12 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 11,873 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

13/10.7/11753-16
03.08.16թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**9 օգոստոսի 2016 թվականի N Մ- 782 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-446-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի օգոստոսի 5-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից ձեռք բերված 2013 թվականի արտադրության «Mitsubishi L200» մակնիշի ամենագնաց ավտոմեքենան (նույնականացման համարը՝ MMBJNKB50ED002434 9,000,000 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ԱՄ ՄՁՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի ծրագրի մասին» N Մ-446-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 օգոստոսի 2016 թվականի N Մ - 783 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 4-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Խորեն Մարդոյանի կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված վերմակների (30 տեղ, 630 կգ ընդհանուր քաշով, 3,900 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է անհատույց հանձնել Երկրապահ կամավորական միությանը՝ սահմանամերձ շրջանների հայկական զորամասերին փոխանցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 օգոստոսի 2016 թվականի N Մ - 784 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 9-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Խորեն Մարդոյանի կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված տաքացուցիչների (3 տեղ, 115 կգ ընդհանուր քաշով, 5,022.49 կանադական դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 811.25 կանադական դոլար, «Ջվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**15 օգոստոսի 2016 թվականի N Մ - 785 - Ա**

**քաղ. Երևան**

# ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի օգոստոսի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռքբերված արևային մարտկոցների (245 հատ, 5,408 կգ քաշով, 33,810 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ), իրենց ղեկավարման վահանակների (28 հատ, 112 կգ քաշով, 5,460 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ), ընդհանուր 130 տեղ, ընդհանուր փոխադրման ծախսերը կազմել են 1,762,000 դրամ ներմուծման ծրագիրը:

Բեռը նախատեսված է անհատույց հանձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակին:

Մաքսային ձևակերպումները կատարվելու են «Արարատյան» տարածաշրջանային մաքսատանը:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 օգոստոսի 2016 թվականի N Մ- 786 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի օգոստոսի 12-ի N 07/80-2/20220-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի օգոստոսի 15-ի N ԱՄ/22.2/8996-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի օգոստոսի 12-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/7400-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 11-ի N 03/3-3/24106-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով 2016 թվականի օգոստոսի 22-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից «Արմենիա-Արցախ» հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (2,218 տեղ, 7,539 կգ ընդհանուր քաշով, 103,241.70 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6,500 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-588-Ա, 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1264-Ա և 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-823-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - AF-076G-4854
Բեռնագիր - NAM2478644
1 x 40' կոնտեյներներ - ECMU9351831
Կապարակնիք - UL5981616
Բեռնված 2016 թ. հուլիսի 27-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Փ. 18005
ԱՄՆ, Հյուսիսային Կարոլինա, Շարլոտ, 28212

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Հայաստան Արցախ Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ +37493-408-974, +37410-225-229

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| Անկողնային պարագաներ | 19 | 154.30 | 1,997.10 |
| Հագուստ և աքսեսուարներ | 530 | 3,761.10 | 56,637.50 |
| Նոր կոշիկներ | 29 | 149.60 | 3,268.80 |
| Հիգիենայի պարագաներ | 20 | 164.00 | 1,773.70 |
| Դպրոցական պարագաներ (մատիտներ, մատիտի սրիչներ, մարկերներ, ռետիններ, ներկելու գրքեր) | 38 | 638.30 | 3,370.30 |
| Կենցաղային պարագաներ (վարագույրներ, կարպետներ, հագուստի կախիչներ, սրբիչներ, գորգիկներ, կտորե անձեռոցիկներ, սեղանի ծածկոցներ, մոմեր, բռնիչներ) | 26 | 298.63 | 2,026.20 |
| Խոհանոցային սպասքեղեն (ափսեներ, բաժակներ) | 8 | 86.20 | 388.00 |
| Ասեղնագործության պարագաներ-կտորներ, թելեր, ասեղներ | 35 | 334.10 | 3,937.70 |
| Ամանորյա տուփեր | 1494 | 1,773.70 | 28,379.20 |
| Նոր խաղալիքներ | 4 | 19.30 | 261.20 |
| Գրասենյակային պարագաներ - թուղթ, թղթապանակ | 2 | 16.90 | 101.00 |
| Գրասենյակային/կենցաղային պարագաներ | 1 | 18.00 | 341.00 |
| Գրասենյակի պահարան | 1 | 21.70 | 49.00 |
| Գրասենյակի պահարանի դարակներ վինիլից | 1 | 4.20 | 45.00 |
| Փայտամշակման գործիքներ (բանվ. ձեռնոցներ, շուշաթուղթ, երկարացման լար, պարան) | 2 | 11.80 | 101.00 |
| Պահեստի համար սանդուղք | 1 | 16.50 | 159.00 |
| Պահեստի համար սեղաններ | 4 | 48.40 | 260.00 |
| Պահեստի համար ձեռնասայլակ | 1 | 14.50 | 85.00 |
| HP տպիչ/պատճենահանիչ | 1 | 6.50 | 40.00 |
| Բեռնախցիկի կազմակերպիչ | 1 | 1.60 | 21.00 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2218 | 7,539 | 103,241.70 |

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2016 թ. հուլիս ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Բաշխվող քանակը / կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ, Ամանորյա տուփերը նախատեսված են շրջանի բոլոր երեխաների համար | Անկողնային պարագաներ | 19 | 154.30 | 1,997.10 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 530 | 3,761.10 | 56,637.50 |
| | Նոր կոշիկներ | 29 | 149.60 | 3,268.80 |
| | Հիգիենայի պարագաներ | 20 | 164.00 | 1,773.70 |
| | Դպրոցական պարագաներ (մատիտներ, մատիտի սրիչներ, մարկերներ, ռետիններ, ներկելու գրքեր) | 38 | 638.30 | 3,370.30 |
| | Կենցաղային պարագաներ (վարագույրներ, կարպետներ, հագուստի կախիչներ, սրբիչներ, գորգիկներ, կտորե անձեռոցիկներ, սեղանի ծածկոցներ, մոմեր, բռնիչներ) | 26 | 298.63 | 2,026.20 |
| | Խոհանոցային սպասքեղեն (ափսեներ, բաժակներ) | 8 | 86.20 | 388.00 |
| | Ասեղնագործության պարագաներ-կտորներ, թելեր, ասեղներ | 35 | 334.10 | 3,937.70 |
| | Ամանորյա տուփեր | 1494 | 1,773.70 | 28,379.20 |
| | Նոր խաղալիքներ | 4 | 19.30 | 261.20 |
| Բերձորի ԱԳԱՊԵ կենտրոն | Գրասենյակային պարագաներ - թուղթ, թղթապանակ | 2 | 16.90 | 101.00 |
| | Գրասենյակային/կենցաղային պարագաներ | 1 | 18.00 | 341.00 |
| | Գրասենյակի պահարան | 1 | 21.70 | 49.00 |
| | Գրասենյակի պահարանի դարակներ վինիլից | 1 | 4.20 | 45.00 |
| | Փայտամշակման գործիքներ (բանվ. ձեռնոցներ, շուշաթուղթ, երկարացման լար, պարան) | 2 | 11.80 | 101.00 |
| | Պահեստի համար սանդուղք | 1 | 16.50 | 159.00 |
| | Պահեստի համար սեղաններ | 4 | 48.40 | 260.00 |
| | Պահեստի համար ձեռնասայլակ | 1 | 14.50 | 85.00 |
| | HP տպիչ/պատճենահանիչ | 1 | 6.50 | 40.00 |
| | Բեռնախցիկի կազմակերպիչ | 1 | 1.60 | 21.00 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 օգոստոսի 2016 թվականի N Մ- 787 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 19-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Հայ մշակութային ֆոնդի կողմից Հայ օգնության միության հասցեով ստացված բեռի (քնապարկեր, 257 տեղ, 1538 հատ, 4,280 կգ ընդհանուր քաշով, 10,000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,940 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է անհատույց բաշխելու զինծառայողներին և ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից ազատամարտիկներին:

2. Հայ օգնության միությանը՝ բեռի բաշխումից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 օգոստոսի 2016 թվականի N Մ- 788 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 23-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ալյումինե պատուհանների աքսեսուարները (21 տեղ, 185 կգ ընդհանուր քաշով, 2,239.85 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 400 եվրո, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 օգոստոսի 2016 թվականի N Մ- 789 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ) **N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված պրոֆիլները և այլ շինարարական նյութերը (3 տեղ, 1,070.90 կգ ընդհանուր քաշով, 120,647.62 ռուսական ռուբլի արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 օգոստոսի 2016 թվականի N Մ- 790 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ) **N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ջեռուցման կաթսաները (1,150 կգ ընդհանուր քաշով, 12,412 եվրո արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 օգոստոսի 2016 թվականի N Մ- 791 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 3-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՇՈՂԻԿ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 18-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Գերմանիայից «Ընկերական շրջանակ» օգնության կոմիտեի կողմից «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (1,500 կգ ընդհանուր քաշով, 4,000 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 2,500 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 3-ի «Շողիկ» հայկական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հոգ Հայաստանին» ծրագրի մասին» N Մ-318-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:
2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Շողիկ
Հայկական Բարեգործական
Հասարակական Կազմակերպություն

Նախագահ Մայքլ Հարիսոն
ք. Երևան, Նոր-Արեշ,26փող, տուն 59/1
հեռ. (010) 433134 (091) 340124
էլ. փոստ:shoghik@armenianministries.org.uk

Ապրանք ստացող: «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպություն
Նոր-Արեշ, 26 փողոց, 59/1
Էրեբունի, Երևան, Հայաստան
Գևորգ Մինասյան
011-37410-43-31-34

| Քանակը | Պարունակություն | Բացատրություն | Արժեքը € | Քաշը (կգ) |
|---|---|---|---|---|
| 350 | հատ | դպրոցական պայուսակ | 3,475.00 € | 1052.3 |
| 350 | հատ | գունավոր մատիտ | 17.50 € | 52.2 |
| 1400 | հատ | տետր | 28.00 € | 126 |
| 350 | հատ | նոթատետր | 52.50 € | 38.5 |
| 350 | հատ | մարկեր | 70.00 € | 45.5 |
| 1050 | հատ | մատիտ (հասարակ) | 126.00 € | 31.5 |
| 700 | հատ | ռետին | 21.00 € | 21 |
| 350 | հատ | սրիչ (մատիտի) | 7.00 € | 7 |
| 1050 | հատ | գրիչ | 157.50 € | 42 |
| 350 | հատ | քանոն | 17.50 € | 17.5 |
| 350 | հատ | օճառ | 3.50 € | 24.5 |
| 350 | հատ | ատամի խոզանակ և ատամի մածուկ | 24.50 € | 42 |
| 7000 | | | 4,000.00 € | 1500 |

Մարդասիրական օգնություն Հայաստանում ապրող մարդկանց համար

«Շողիկ» ՀԲՀԿ-ի տնօրեն՝  Գ. Մինասյան

17.08.2016թ.

Բաշխման ցանկ

| | դպրոցական պայուսակ (հատ) | | գունավոր մատիտ (հատ) | | տետր (հատ) | | նոթատետր (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԼՂՀ Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ N 1 գիշերոթիկ հաստատություն | 50 | 795.00 € | 50 | 5.50 € | 200 | 16.00 € | 50 | 10.50 € |
| ԼՂՀ Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան N 9 միջնակարգ դպրոց | 80 | 1,272.00 € | 80 | 8.80 € | 320 | 25.60 € | 80 | 16.80 € |
| ԼՂՀ գ. Նոր Մարաղա միջնակարգ դպրոց | 30 | 477.00 € | 30 | 3.30 € | 120 | 9.60 € | 30 | 6.30 € |
| ԼՂՀ ք. Շուշիում գրանցված «Հույսի Արցախ» հ/կ | 40 | 636.00 € | 40 | 4.40 € | 160 | 12.80 € | 40 | 8.40 € |
| Արարատի մարզ Դիտակի Գյուղապետարան | 30 | 477.00 € | 30 | 3.30 € | 120 | 9.60 € | 30 | 6.30 € |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 30 | 477.00 € | 30 | 3.30 € | 120 | 9.60 € | 30 | 6.30 € |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով ընտանիքներ | 90 | 1,441.00 € | 90 | 9.90 € | 360 | 28.80 € | 90 | 18.90 € |
| | ***350*** | ***5,575.00 €*** | ***350*** | ***38.50 €*** | ***1400*** | ***112.00 €*** | ***350*** | ***73.50 €*** |

| | մարկեր (հատ) | | մատիտ (հասարակ) (հատ) | | ռետին (հատ) | | սրիչ (մատիտի) (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԼՂՀ Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ N 1 գիշերոթիկ հաստատություն | 50 | 13.00 € | 150 | 27.00 € | 100 | 9.00 € | 50 | 4.00 € |
| ԼՂՀ Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան N 9 միջնակարգ դպրոց | 80 | 20.80 € | 240 | 43.20 € | 160 | 14.40 € | 80 | 6.40 € |
| ԼՂՀ գ. Նոր Մարաղա միջնակարգ դպրոց | 30 | 7.80 € | 90 | 16.20 € | 60 | 5.40 € | 30 | 2.40 € |
| ԼՂՀ ք. Շուշիում գրանցված «Հույսի Արցախ» հ/կ | 40 | 10.40 € | 120 | 21.60 € | 80 | 7.20 € | 40 | 3.20 € |
| Արարատի մարզ Դիտակի Գյուղապետարան | 30 | 7.80 € | 90 | 16.20 € | 60 | 5.40 € | 30 | 2.40 € |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 30 | 7.80 € | 90 | 16.20 € | 60 | 5.40 € | 30 | 2.40 € |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով ընտանիքներ | 90 | 23.40 € | 270 | 48.60 € | 180 | 16.20 € | 90 | 8.20 € |
| | ***350*** | ***91.00 €*** | ***1050*** | ***189.00 €*** | ***700*** | ***63.00 €*** | ***350*** | ***29.00 €*** |

| | գրիչ (հատ) | | քանոն (հատ) | | օճառ (հատ) | | ատամի խոզանակ և ատամի մածուկ (հատ) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԼՂՀ Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ N 1 գիշերոթիկ հաստատություն | 150 | 31.50 € | 50 | 5.50 € | 50 | 3.50 € | 50 | 6.50 € |
| ԼՂՀ Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան N 9 միջնակարգ դպրոց | 240 | 50.40 € | 80 | 8.80 € | 80 | 5.60 € | 80 | 10.40 € |
| ԼՂՀ գ. Նոր Մարաղա միջնակարգ դպրոց | 90 | 18.90 € | 30 | 3.30 € | 30 | 2.10 € | 30 | 3.90 € |
| ԼՂՀ ք. Շուշիում գրանցված «Հույսի Արցախ» հ/կ | 120 | 25.20 € | 40 | 4.40 € | 40 | 2.80 € | 40 | 5.20 € |
| Արարատի մարզ Դիտակի Գյուղապետարան | 90 | 18.90 € | 30 | 3.30 € | 30 | 2.10 € | 30 | 3.90 € |
| ՀՀ Աշխատանքի և Սոց. Հարցերի Նախարարություն | 90 | 18.90 € | 30 | 3.30 € | 30 | 2.10 € | 30 | 3.90 € |
| «Շողիկ» ՀԲՀԿ-ում գրանցված անապահով ընտանիքներ | 270 | 56.70 € | 90 | 9.90 € | 90 | 6.30 € | 90 | 11.70 € |
| | ***1050*** | ***220.50 €*** | ***350*** | ***38.50 €*** | ***350*** | ***24.50 €*** | ***350*** | ***45.50 €*** |

«Շողիկ» ՀԲՀԿ-ի տնօրեն՝ Գ. Մինասյան ............/

17.08.2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2 սեպտեմբերի 2016 թվականի N Մ - 792 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔ ԵՎ ԱՌՈՂՋ ԾԵՐԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի օգոստոսի 22-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 788,009,250 դրամ արժողությամբ «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզպետարաններ:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
«10» օգոստոսի 2016թ.

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔ և ԱՌՈՂՋ ԾԵՐԱՑՈՒՄ**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել տարեցների, քրոնիկ հիվանդություն և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը՝ հիմնեցրված առողջապահական և սոցիալական ծառայություններին հասանելիության բարելավման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով |
| 3. | Բարերարը | Շվեյցարական Կարմիր Խաչ |
| 4. | Ծրագիրը կատարող | Հայկական Կարմիր Խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և շահառուները | Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզեր, սոցիալ-առողջապահական ոլորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 788.009.250 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործության ստացողը | Տարեցներ, հաշմանդամություն և քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման ժամանակահատվածը | 2016 թվականի մայիսի 1- ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝<br>1. Տարեց և սահմանափակ կարողություններով անձանց համար որակյալ ինտեգրացված բժշկասոցիալական խնամքի հասանելիության բարելավում<br>2. Համայնքների կարողությունների բարելավում ՝ բնակչության խոցելի խմբերին աջակցելու և տեղային որոշումների կայացմանը վրա ազդեցություն ունենալու առումով (առողջ ծերացում )<br>3. ՀԿԽԸ ունի համապատասխան ռեսուրսներ համայնքային տնային խնամքի մոդել ներդնելու և համայքնային նախաձեռնություններին աջակցելու համար՝ հանդիսանալով վստահելի գործընկեր հանրային առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում<br>Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br><br>Ակնկալվող արդյունք 1<br>1.1 Համայնքային տնային խնամքի կառուցվածքի և համակարգի ներդնում:<br>Միջոցառումն իր մեջ ներառում է<br>• տարեցների կարիքների գնահատում<br>• համակագի ծախսարդյունավետության վերաբերյալ |



| | | |
|---|---|---|
| | | հետազոտություն,<br>• հնարավոր շահառուների տվյալների բազայի ստեղծում և վարում,<br>• տրամադրվող ծառայությունների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում և վարում,<br>• տնային խնամքի համայնքային կենտրոնների հիմնում, դրանց վերանորոգում և կահավորում<br>• տնային խնամքի կազմակերպում և իրականացում, ներառյալ տնային խնամք կազմակերպելու համար անհրաժեշտ պարագաների տրամադրումը, մասնավորապես՝ միանգամյա օգտագործման հիգիենիկ պարագաներ, քայլակներ, շարժական զուգարանակոնքեր, անկողնային հատուկ պարագաների և այլն,<br>• համագործակցություն և պարբերաբար հանդիպումներ ու միջոցառումներ շահագրգիռ կողմերի՝ ինչպես պետական կառավարման, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների հետ,<br>• համակարգի ներդրման համար ՀԿԽԸ համապատասխան ներքին քաղաքականության համապատասխանեցում, այդ թվում՝ համակարգում ընդգրկված կամավորների կառավարման, արդյունքների դիտարկման և գնահատման մեխանիզմների մշակում կամ թարմացում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի |

31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 91.115.000 ՀՀ դրամ:

1.2 Համայնքային տնային խնամքում ընգրկված աշխատակազմի և կամավորների կրթման համակարգի ներդնում: Միջոցառումը ներառում է՝

- տնային խնամք իրականացնելու նպատակով աշխատակազմի համալրում անհրաժեշտ որակավորմամբ աշխատակիցներով,
- ընդգրկված աշխատակիցների և կամավորների հատուկ դասընթացներ ստանալու վերաբերյալ կարիքների գնահատում,
- կարիքներին համապատասխան դասընթացների ձևավորում,
- մասնագիտացված բուժքույրերի, տնային խնամողների և կամավորների համար առանձնացված դասընթացների ձևավորում,
- մասնագիտացված բուժքույրերի, տնային խնամողների և կամավորների համար առանձնացված դասընթացների կազմակերպում և իրականացում
- տնային խնամքի ուղեցույցների մշակում, թարգմանություն և հրապարակում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:



Ընդհանուր արժողությունը՝ 130.930.000 ՀՀ դրամ:

1.3 Համայնքային տնային խնամքի համակարգ ներդնելու նպատակով համապատասխան նորմատիվ-կարգավորող հենքի ապահովում: Միջոցառումը ներառում է՝

- համակարգի կառավարման համար անհրաժեշտ ներքին կարգավորող փաստաթղթերի մշակում, հաստատում և ներկայացում,
- որակի վերահսկման համակարգի մշակում, սահմանում և ներդնում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 3.130.000 ՀՀ դրամ:

1.4 Համայնքային տնային խնամքի համակարգ ներդնելու նպատակով համապատասխան գործընկերության հիմնում:

Միջոցառումը ներառում է՝

- հիմնական գործընկերների հետ փոխըմբռնման հուշագրերի ստորագրում և դերերի սահմանում
- ազգային և մարզային մակարդակներում պետական կառավարման մարմինների, տեղային ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների

| | | |
|---|---|---|
| | | ընդգրկմամբ աշխատանքային խմբերի ստեղծում: Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 6.137.500 ՀՀ դրամ: 1.5 Համայնքային տնային խնամքի համակարգի ներկայացում և խթանում ազգային մակարդակում: Միջոցառումը ներառում է՝ • մոդելի և դրա հիմնական բաղադրիչների սահմանում, • մատուցվող ծառայությունների արժեքի հաշվարկ, • մոդելի տնտեսական և սոցիալական առումով արդյունավետության վերաբերյալ հետազոտության իրականացում, • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող հետազոտությանը տեխնիկական աջակցության տրամադրում, • շահառուների կյանքի որակի փոփոխության վերաբերյալ հետազոտության իրականացում, • նմանատիպ ծրագրեր իրականացնող երկրներ փորձի փոխանակման նպատակով և ուսուցողական այցերի |



| | | |
|---|---|---|
| | | կազմակերպում, • մոդելի ջատագովում ազգային մակարդակում որոշում կայացնողների շրջանում: Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 49.450.000 ՀՀ դրամ : Ակնկալվող արդյունք 2 2.1 Համայնքային աշխատանքում մասնակցային մեթոդի ներկայացում: Միջոցառումը ներառում է՝ • առողջ ծերացման գաղափարի և համայնքային մասնակցային աշխատանքի ներկայացում ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակում և ընտրված մարզերում, • համայնքային մասնակցային աշխատանքի ներկայացում ընտրված համայնքներին, • համայնքային ակտիվ խմբերի համար հաշվետվության և փորձի փոխանակման մեխանիզմների մշակում, • համայնքային աշխատանքին առնչվող ներքին կանոնակարգող փաստաթղթերի մշակում: Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2017 թվականի |

| | | |
|---|---|---|
| | | դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 3.530.000ՀՀ դրամ:<br>2.2 Համայնքային մասնակցային մեթոդի վերաբերյալ աշխատակազմի և կամավորների կրթական համակարգի ներդնում: Միջոցառումը ներառում է՝<br>• համայնքային ակտիվ խմբերի համակարգողի ընտրություն երկու մարզերում,<br>• ընդգրկված կամավորների և աշխատակիցների հատուկ դասընթացներ ստանալու վերաբերյալ կարիքների գնահատում,<br>• կարիքներին համապատասխան դասընթացների ձևավորում,<br>• համայնքային աշխատանքի ուղեցույցների մշակում,<br>• համայնքային աշխատանք իրականացնող այլ ազգային ընկերությունների հետ փորձի փոխանակում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 11.775.000 ՀՀ դրամ:<br>2.3 Համայնքի ներսում համագործակցության և հաղորդակցման բարելավում: Միջոցառումը ներառում է՝<br>• հանդիպումներ համայնքներում և համայնքային ակտիվ խմբերի ձևավորում, |



| | | |
|---|---|---|
| | | • համայնքային խմբի անդամների համար դասընթացների կազմակերպում առողջ ծերացման և մասնակցային համայնքային աշխատանքի վերաբերյալ,<br>• համայնքի կարիքներին և գերակայություններին ուղղված քննարկումներ և հանդիպումներ համայնքներում,<br>• համայնքային խմբերի կարողությունների զարգացում ռեսուրսներ մոբիլիզացնելու, ծրագրեր ձևավորելու և իրենց մոտեցումները ջատագովելու վերաբերյալ,<br>• շահառուներին այցելություններ և աջակցություն ցուցաբերելու համար անհրաժեշտ տարրական գիտելիքների տրամադրում համայնքային խմբի անդամներին,<br>• միասնական նախաձեռնությունների և փոքրածավալ ծրագրերի իրականացում մի քանի համայնքային խմբերի կողմից,<br>• այլ համայնքներ փորձի փոխանակմանն ուղղված այցերի պարբերաբար կազմակերպում,<br>• համայնքի կարիքների համար ջատագովում,<br>• լավագույն փորձի հավաքագրում և հրապարակում,<br>• այլ համայնքներում հաջողված փորձի ներդնում, |

- իրազեկման ակցիաների և կլոր սեղանների կազմակերպում,
- համայնքային խմբերի ֆինանսավորում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 78.405.000 ՀՀ դրամ:

Ակնկալվող արդյունք 3

3.1 Համայնքային տնային խնամքի և մասնակցային համայնքային աշխատանքի ներդրում թիրախ մարզերում: Միջոցառումը ներառում է

- Ծրագրի իրականացման և ներդրված սոցիալ-առողջապահական խնամքի համակարգի գործունեությունն ապահովելու տեսակետից համապատասխան մարզային մասնաճյուղերի կարիքների գնահատում,
- համայնքային տնային խնամքի համակարգի ներդրման և գործունեության, միջոցառումների, հանդիպումների և կլոր սեղանների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության ապահովում,
- դժվարհասանելի համայնքների ներգրավման, համայնքային ակտիվ խմբերի պարբերական հանդիպումների, համատեղ միջոցառումների և փորձի փոխանակման, ինչպես նաև տնային



խնամքի շարժական բրիգադաների միջոցով բոլոր շահառուներին հավասարաչափ հասանելիության նպատակով տրանսպորտային միջոցներով ապահովում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 123.302.500 դրամ

3.2 Ծրագրի բաղադրիչների՝ համայնքային տնային խնամքի և մասնակցային համայնքային աշխատանքի ներդրման նպատակով համապատասխան կառուցվածքային և տեխնիկական ռեսուրսների բարելավում ազգային մակարդակում:

Միջոցառումը ներառում է ազգային մակարդակում ծրագրի իրականացման տեսակետից կարիքների գնահատում և դրա արդյունքներին համապատասխան ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված ռեսուրսների բարելավում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 131.950.000 ՀՀ դրամ

3.3 Ծրագրի նպատակներին ուղղված և դրանց հասնելու նպատակով փորձի և կարողությունների բարելավում

Միջոցառումը ներառում է՝

| | | |
|---|---|---|
| | | • ՅԿԽԸ մարզային մասնաճյուղերի կարողությունների գնահատում հատուկ մշակված գործիքակազմի օգտագործմամբ,<br>• մարզային մասնաճյուղերում պարբերաբար հանդիպումների կազմակերպում՝ որոշ կառավարման ֆունկցիաներ մասնաճյուղերին լիազորելու համար,<br>• ազգային և միջազգային հանդիպումներին մարզային ներկայացուցիչների մասնակցության ապահովում, փորձի փոխանակում,<br>• ծրագրերի գնահատման միասնական համակարգի մշակում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 48.225.000 ՀՀ դրամ :<br>Կազմակերպչական ծախսեր՝ 110.059.250 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է<br>• տնային խնամք ապահովելու համար անհրաժեշտ պարագաներ, մասնավորապես՝ միանգամյա օգտագործման հիգիենիկ պարագաների, քայլակների, շարժական զուգարանակոնքերի, անկողնային հատուկ պարագաների և այլնի ձեռքբերում՝ 22.100.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, տնային խնամքի համայնքային կենտրոնները հագեցնելու նպատակով |



| | | |
|---|---|---|
| | | կահույքի և տեխնիկայի ձեռքբերում՝ 23.150.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• դժվարհասանելի համայնքները ծրագրում ներգրավելու, համայնքային ակտիվ խմբերի համատեղ աշխատանքը ապահովելու, ինչպես նաև տնային խնամքի շարժական բրիգադաների միջոցով բոլոր շահառուների համար հասանելիությունը ապահովելու նպատակով ավտոմեքենաների ներկրում կամ ձեռքբերում՝ 60.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• վառելիքի ձեռքբերում և մեքենաների պահպանման ծախսեր՝ 38.400.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• թիրախ մարզերի մարզային մասնաճյուղերը, համայնքային ինտեգրացված խնամքի կենտրոնները ինտերնետով և կապի այլ միջոցներով ապահովում, կոմունալ այլ ծառայություններ 31.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• միջոցառումների, հանդիպումների, կլոր սեղանների կազմակերպման նպատակով դահլիճի վարձակալության վճարներ, սննդի և գրենական պիտույքների, կամավորների խրախուսման միջոցների ձեռքբերում 35.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• համայնքային ինտեգրված խնամքի կենտրոնների, ծրագրի |

| | | |
|---|---|---|
| | | թիրախ մարզային մանկաբուժների վերանորոգման ծախսեր 81.225.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• անձնակազմի գործուղման ծախսեր՝ ներառյալ ավիատոմսերի ծեռքբերում՝ միջազգային գործուղումների դեպքում և հյուրանոցային ծառայություններ՝ տեղական գործուղումների դեպքում՝ 46.780.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• թարգմանչական ծառայություններ, հետազոտական աշխատանքներ, կրթական նյութի մշակում և տպագրություն 28.875.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• արտաքին աուդիտի համար նախատեսված է 10.000.000 ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսերը, նախատեսված 2016թ. մայիսի 1-ից 2019թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար, կազմում են 110.059.250 ՀՀ դրամ: Դրանք ներառում են գործունեության համար անհրաժեշտ այնպիսի ծախսեր, ինչպիսիք են գույքի պահպանման, արտաքին աուդիտի, բանկային ծառայությունների վճարներ՝ 49.460.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, կոմունալ ծառայությունների համար նախատեսված ծախսեր՝ 16.125.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, համակարգչային տեխնիկայով ապահովում՝ 6.950.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, այլ անուղղակի ծախսեր՝ |



| | | |
|---|---|---|
| | | 37.524.250 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ : |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ պետական կառավարման լիազոր մարմինների, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև թիրախ մարզերի մարզպետարանների հետ փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում սերտ համագործակցությամբ: Տարեցների խնամքով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված Տարեցների պաշտպանության ցանցի շրջանակներում իրականցվում է սերտ համագործակցություն ոլորտում գործող հասարակական և ակադեմիական կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Շվեյցարական Կարմիր Խաչին: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ համաձայն սահմանված կարգի: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**26 օգոստոսի 2016 թվականի N Մ - 792 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի օգոստոսի 25-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված կոպիտ սղոցված չմշակված մարմարից ուղղանկյուն և քառակուսի բլոկերի (166,870 կգ ընդհանուր քաշով, 17,247 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 12,520 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**7 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 793 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N Մ-790-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 2 («Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-790-Ա որոշման 1-ի կետում «1,150 կգ ընդհանուր քաշով, 12,412 եվրո արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ» բառերը փոխարինել «1,150 կգ ընդհանուր քաշով, 14,339 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 358,500 դրամ, ԵՏՄ բեռ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**7 սեպտեմբերի 2016 թվականի N Մ- 794 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի սեպտեմբերի 6-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ջրային պոմպերը (3 տեղ, 855 կգ ընդհանուր քաշով, 11,785 եվրո արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ